

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

«08» նոյեմբեր 2019թ.

No 3281 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԷՄԻԼ ԳԱՔՐԻԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ  
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման Հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20)-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս` պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 992-Ն որոշումը,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար` 2020 թվականի հունվարի 22-ին ժ.11<sup>00</sup>-ին անցկացնել բաց մրցույթ:
2. Հաստատել սույն հրամանի 1-ին կետում նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթի հայտարարության տեքստը` համաձայն հավելվածի:
3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության պետի պաշտոնակատար Քրիստինա Գյուրջյանին`

- ապահովել վերը նշված հայտարարության հրապարակումը մրցույթն անցկացնելու օրվանից առնվազն 65 օր առաջ՝ 5-օրյա պարբերականությամբ 2 անգամ, առնվազն մեկ հազար տպաքանակ ունեցող մամուլի միջոցով:

4. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

- ապահովել վերը նշված հայտարարության հրապարակումը մրցույթն անցկացնելու օրվանից առնվազն 65 օր առաջ՝ զանգվածային լրատվության այլ միջոցներով /մասնավորապես staff.am, career center, facebook/, ինչպես նաև տեղադրումը ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում:

Ա.ԹՈՐՈՍՅԱՆ